ՊԱՇՏՈՆ	Հաշվետվությունների բաժնի Գլխավոր մասնագետ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ	09/04/2025
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	23/04/2025
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Անորոշ

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է մոտիվացված և խելացի թիմի անդամի, ով կմիանա թիմին որպես Հաշվետվությունների բաժնի Գլխավոր մասնագետ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ՀՀ ԿԲ օրենքներով, որոշումներով, կարգերով և կանոնակարգերով սահմանված հաշվետվությունների հավաքագրում, կազմում և ստուգում՝ հաշվետվությունների կազմման և ստուգման ներքին ընթացակարգին համապատասխան,
- Բանկի բաժնետերերին, խորհրդին, վարչությանը և ղեկավարությանը ներկայացվող հաշվետվությունների հավաքագրում, կազմում և ստուգում,
- Արտաքին աուդիտ իրականացնող կազմակերպությանը տրամադրվող տեղեկատվության հավաքագրում և ստուգում, ինչպես նաև՝ ծանոթագրությունների կազմում և ստուգում՝ համաձայն իրենց ձևաչափի,
- Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառնություններ,
- Արտաքին գործընկերներին ներկայացվող տեղեկատվության հավաքագրում և տրամադրում՝ ըստ պահանջի և պարբերականության:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն,
- Նվազագույնը 4 տարվա համապատասխան աշխատանքային փորձ,
- Հայերեն գերազանց, ռուսերեն և անգլերեն լեզուների լավ իմացություն,
- Փոփոխություններին արագ արձագանքելու կարողություն,
- Հաղորդակցման հմտություններ,
- Մանրուքների նկատմամբ ուշադրություն,
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ,
- Միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու կարողություն,
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն,
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն,
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/139 : Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://idbank.am/ :